

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԱՌԱՎՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻՆ ՖՐԱՆՍԵՐԵՆ

ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Ա. Գ.

1902 թվականին „Journal Asiatique” պարբերականում ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը հրատարակում է Մխիթար Գոշին վերագրվող առակների ընտրանին՝ իր թարգմանությամբ¹: Մակլերի թարգմանած առակները թվով 178-ն են, իսկ հայ բանասիրության մեջ դրանց ընդունված թիվը 190 է²: Ֆ. Մակլերը նույնպես իր հրապարակման «Նախաբանում» նշում է, թե դրանց թիվը 190 է. «Սա 190 առակների մի ժողովածու է, որը երկու անգամ կրկնված հրատարակվել է Մխիթարյանների կողմից Վենետիկում՝ 1790-ին և 1842-ին»³: Նա նշում է, որ առակները Մխիթար Գոշինն են համարել Սեն-Մարտենը, Լը Վայան դը Ֆլորիվալը և ուրիշներ: Իսկ ռուս գիտնական Նիկողայոս Մառը, քննելով Վարդան Այգեկցու առակների հեղինակային պատկանելության խնդիրը, խոսել է նաև Մխիթար Գոշի առակների մասին՝ դրանց հեղինակային խնդիրը թողնելով առկալի⁴:

Տարբեր բանասերներ հայ իրականության մեջ ևս անդրադարձ ունեն Մխիթար Գոշի առակների հեղինակային պատկանելության խնդրին: Մանուկ Աբեղյանը Մխիթար Գոշին անվերապահորեն համարում է առակագիր և նրան վերագրվող առակների հեղինակ. «Թե Մխիթարի անունով մնացած առակները նրանն են, այդ ցույց է տալիս նրանց բովանդակությունն էլ, որ տանում է մեզ այն ժամանակը, «երբ հայերը դեռ քաղաքական ազատություն ունեին և մահմեդականներից ավելի ուժեղ էին զգում իրենց»⁵: Թեպետ առակներն առկա են քրիստոնյաների կանոնական սրբազան գրքերում՝ Հին ու Նոր կտակարաններում, սակայն հայոց եկեղեցին գրական այդ տեսակը չի ներմուծել պաշտոնական գրականության ժանրային համակարգի մեջ: Այս առումով Մխիթար Գոշը մեծ նորարար է: Եվ նրա առակները միանգամայն համահունչ են Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» եությամբ: Երկու դեպքում էլ Մխիթար Գոշը նպատակ ուներ հայ հասարակության մեջ ուժեղացնել իրավական դաշտը, դրանք հարմարեցնել Աստվածաշնչի պատվիրաններին, հասարակու-

¹ *Choix de Fables Arméniennes attribuées à Mkhitar Goch, traduites par F. Macler (տե՛ս Journal Asiatique, 1902, p. 457-487).*

² **Մ. Աբեղյան**, *Հայոց հին գրականության պատմություն, գիրք Երկրորդ, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 158:*

³ *Choix de Fables...*, p. 457.

⁴ *Նույն տեղում*, p. 459.

⁵ **Մ. Աբեղյան**, *Հայոց հին գրականության պատմություն, գիրք Երկրորդ, էջ 155: Մ. Աբեղյանի դրույթը մանրամասնել է բանասեր Էմ. Պիվազյանը՝ Եզրահանգելով, թե դատաստանագրքի և առակների հեղինակը Մխիթար Գոշն է (տե՛ս Պիվազյան Էմ., Մխիթար Գոշի դատաստանագրքի բանասիրական քննություն, Ե., 1987, էջ 95-110):*

թյան միջից արմատախիլ անել մարդկային կյանքում այդքան լայն չափով տեղ գտած արատները: «Գիրք դատաստանի» «Նախադրության» Բ գլխում՝ «Յաղագս թե ընդէ՞ր այժմ կամեցաք գրել կամ յումէ շարժեալ յայտոսիկ եկաք միտս», հեղինակը թվարկում է այն պատճառները, որոնք եղել են դատաստանագիրք գրելու շարժառիթը: Միջնադարի իրավագետը տասներկու կետերով հիմնավորում է, թե ինչու է ստեղծել իր օրենսգիրքը: Երկրորդ կետում նշում է, թե ուզում է մարդկանց մեջ մարել չարությունը, հոգու անկատարելությունը դարձնել կատարյալ, ատելությունը փոխել վշտակցության, սիրո. «Եւ երկրորդ՝ զի զբնաւորականն ի մեզ արեւնս չարութիւնն շիջոյց, եւ զկատարելութիւնն՝ անկատարութիւն հոգւոյ, եւ զվշտակցութիւն սիրոյ՝ ատելութիւն»⁶: Դեռնս անտիկ ժամանակներից հայտնի է, որ հասարակությունն առողջացնելու և մարդկանց ճիշտ դաստիարակելու լավագույն միջոցը հենց առակներն են: Լաֆոնտենի առակների նախաբանում տիկին Ամաբլ Տասթուն հետաքրքիր ձևով է բացատրում առակի ներգործությունը մատաղ սերնդի վրա: Նրա կարծիքով, առակի ոճը երեխայի համար կարևոր չէ. երեխան կարող է չհասկանալ առակի ողջ արվեստը, սակայն հիանալի զգալ առակը: Ոճի խնդիրները նրանց համար կարևոր չեն, կարևորը զգացմունքն է, դրամատիկական էֆեկտը և կենդանի տպավորությունը: Երեխան հուզվում է և սարսռում գայլի ու գառան երկխոսությունից, տեսնում է այդ տեսարանն ամբողջովին և այդ մասին ոչինչ հարցնելու կարիք չունի: Նրա խղճահարությունը փոքրիկ գառան նկատմամբ, սուկումը չար գայլից. ահա առակի թողած տպավորության արդյունքը⁷:

Լաֆոնտենի առակների վեցերորդ հրատարակության հեղինակը զետեղել է առակների հեղինակի ուղերձը Լյուդովիկոս XIV-ի 6 տարեկան և 5 ամսական որդուն, որում նա իմաստուն ու մատչելի բացատրում է փոքրիկ արքայազնին, թե որքան կարևոր է Ֆրանսիայի ապագա թագավորի համար այդ առակների յուրացումը: Նա չի մոռանում հիշատակել, թե իր առակները քաղել է Եզովպոսից. «Ես խոստովանում եմ, որ այդ առակներն արտաքուստ մանկական են, սակայն այդ մանկականությունը պարունակում է կարևոր ճշմարտություններ»⁸: Նրա կարծիքով, ապագա թագավորը դեռ վաղ հասակից պետք է ծանոթանա մարդկության հնագույն իմաստությանը՝ հզոր, խելացի ու արդարադատ գահակալ լինելու համար: Իր դիմումի մեջ ունի նաև չափածո հատված՝

Մոնսենյոր դոֆինին⁹

Ես երգում եմ հերոսների, որոնց հայր Եզովպոսը,

⁶ Մխիթար Գոշ, *Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոպյանի, Ե., 1975, էջ 3:*

⁷ *Fables La Fontaine, avec des notes par m^{me} Amable Tastu, sixième édition, Paris (թվական չկա), p. IV.*

⁸ *Fables La Fontaine...*, p. 1.

⁹ *Դոֆինը Լյուդովիկոսն է՝ Լյուդովիկոս XIV-ի և Մարի-Թերեզ Ավստրիացու որդին (1661-1711):*

Խմբել է պատմության մեջ ու ցույց տվել նրանց սուտը,
 Նրանցում կա միայն ճիշտը, ծառայում է որպես դասը,
 Ամեն բան է խոսում այնտեղ, նույնիսկ անգամ համր ձուկը,
 Ինչ որ ասում են նրանք՝ ուղղված է մեզ՝ ամենքիս,
 Կենդանիների միջոցով ես սովորեցնում եմ բոլորիս¹⁰:

Պլատոնը, որ մերժում էր Հոմերոսին, Եզովպոսին հատկացնում էր շատ պատվելի տեղ և ցանկանում էր, որ երեխան մոր կաթի հետ միասին Եզովպոսի առակներով սնվի՝ իմաստուն ու առաքինի դառնալու համար¹¹: Այս ամենը քաջ գիտակցելով՝ Լաֆոնտենը իր առակագրական բոլոր ժողովածուների սկզբում դնում էր Եզովպոսի կենսագրությունը: Ֆրանսիացիների հետաքրքրությունը դեպի առակագրությունը նրանց ուշադրությունը հրավիրեց նաև Մխիթար Գոշի առակների վրա, և առաջինը նրանց մասին խոսեց ֆրանսիական հայագիտության գիտական հիմնադիրը՝ Մեն-Մարտենը, XIX դ. սկզբին:

Ֆրեդերիկ Մակլերը ծանոթ է նաև 1878-ին Բաքվում Խորեն քահանա Միրզաբեկյանցի հրատարակած Մխիթար Գոշի, Ողոմպիանու և Եզովպոսի ընտիր առակների գրքին¹², որտեղ, ի դեպ, իմաստուն քահանան շեշտում է առակների դաստիարակչական կարևոր դերը. «Այո՛, իմաստուն մարդիկը գտան այդ հնարը միմիայն առակներով: Այն, ինչ որ առակներով էր հայտնել և զգուշացրել՝ թագավորից սկսած մինչև հետին ռամկին, անհնար էր հայտնել և խրատել այլապես»¹³:

Ֆրեդերիկ Մակլերը մանրամասն խոսում է Մխիթար Գոշի կյանքի ու գործունեության մասին: Նա սխալվում է հայոց դատաստանագրքի հեղինակի մահվան թվականի խնդրում. «Նրա մահվան թվականը գլխավորապես դրվում է 1207-ին»¹⁴: Սա այն ժամանակահատվածն էր, որը հայ գրականության պատմության մեջ համարվում էր «արծաթե դար», և այն ընդգրկում էր XI-XII դդ. հայ գրականությունը: Սա մի ժամանակահատված էր, երբ կայուն կապեր կային Մեծ Հայքի ու Կիլիկյան Հայաստանի միջև: Կիլիկիան խա-չակիրների միջոցով սերտ կապեր էր հաստատել Արևմուտքի հետ: Մխիթար Գոշը Ներսես Շնորհալու, Մատթեոս Ուռհայեցու և Ներսես Լամբրոնացու ժամանակակիցն էր:

Մակլերը նշում է, որ Մխիթար Գոշը հիմնել է վանքեր ու եկեղեցիներ, եղել է մեծ ուսուցչապետ, որի մոտ կրթվելու էին գալիս ոչ միայն հոգևորականներ, այլև աշխարհիկ մարդիկ:

¹⁰ Fables La Fontaine..., p. 31.

¹¹ Նույն տեղում, p. 8-9.

¹² Նույն տեղում, p. 460.

¹³ **Գոշ Մխիթարի**, Ողոմպիանու և Եզովպոսի ընտիր առակները, թարգմանություն Խորեն քահանայի Միրզաբեկյանց, Բազու, 1878, էջ ա:

¹⁴ Choix de Fable..., p. 461. «Գիրք դատաստանի» քննաբնագրի հեղինակ Խ. Թորոսյանը Մ. Գոշի մահվան թվականի մասին գրում է. «Ստույգ է, որ նա մահացել է 1213 թվականին» (տե՛ս «Գիրք դատաստանի», էջ Է):

Մխիթար Գոշի կարծիքով, թե թագավորներն ու իշխանները և թե հասարակ մարդիկ հլու հնազանդ պետք է ենթարկվեին հոգևորականներին, ու այս միտքն առկա է նաև նրա առակներում:

Ֆ. Մակլերի կարծիքով, Մխիթար Գոշին անմահություն է ապահովել նրա դատաստանագիրքը: Հայագետը նկատում է Մխիթար Գոշի առակների լեզվի խիստ ժողովրդական բնույթը: Նա մոռանում է մի երևույթ, որն առկա էր XII դ. կիլիկյան գրականության մեջ, և դրա հեղինակը Ներսես Շնորհալին էր հանելուկների ժողովրդական լեզվով: Այդ մասին Ֆրեդերիկ Ֆեյդին՝ Ֆրեդերիկ Մակլերի աշակերտը գրում է, թե Ներսես Շնորհալին, ծնված լինելով սուրբ Ֆրանսուա Ասիզից երեք քառորդ դար առաջ, գրեց ժողովրդական լեզվով՝ հոգևոր գաղափարներն ամենքին առավել հասանելի դարձնելու համար: Սա մի հեղաշրջում էր հայ բանաստեղծության մեջ¹⁵:

Լիովին հասկանալի է, որ Մխիթար Գոշն իր առակների լեզվի հարցում հետևել է հենց այդ նորարարությանը:

Ֆրեդերիկ Մակլերը Գոշի առակների քննությունը կատարելիս ունի մեծարժեք նկատումներ: «Բարոյախոսի» մեջ առակի գործող անձինք բացառապես կենդանիներն են, իսկ Գոշի առակներում՝ բույսերը...«Հնայած «Բարոյախոսը» ամենից ավելի խոսել է տալիս կենդանիներին, Մխիթար Գոշը ամեն բանում շատ հարազատ մնալով նրան՝ կամենում է ապացուցել իր ինքնատիպությունը՝ հիմնականում խոսքը տալով բույսերին»¹⁶: Այս երևույթը մեծ նորություն էր հայ միջնադարի համար, որովհետև Լաֆոնտենը, հետևելով Եզովպոսին ու հունական առակագրությանը, Գոշից դարեր հետո միայն առակի գործող անձեր դարձրեց բույսերին, ինչպիսին տեսնում ենք նրա շատ գեղեցիկ մի առակում, որը կոչվում է «Կաղնին ու եղեգնը»:

Հայկական կենդանական առակները, որոնք Անանուն մեկի կողմից թարգմանվել էին ֆրանսերեն, ըստ Մակլերի, տպագրվել են XIX դ., երկու անգամ¹⁷: Մակայն Գոշի առակները էապես տարբերվում են. նրանցում ուժեղ է ուսուցողական բնույթը, որն ուղղված է բոլոր խավերին՝ թե թագավորներին և թե իշխաններին, նաև հասարակ մարդկանց: Երբեմն այդ առակները թվում են քարոզներ: Հայագետը գրական ֆրանսերենով թարգմանել է Մխիթար Գոշի առակները, որպեսզի ընթերցողը կարողանա ինքնուրույն գնահատել XII դ. հայ առակագրի գործերի գրական արժեքը:

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում պահպանված՝ Մխիթար Գոշի առակները երբեմն ունեն հեղինակի անվանումը: Այսպես, օրինակ, թիվ 607 ձեռագրի 138ա-145բ թերթերը ներկայացնում են Մխիթար Գոշի շատ հայտնի առակների մի մասը՝ հետևյալ խորագրով «Առակք առասպելականք եւ բարոյականք, որ կերպարն է զճմարտութիւն, ասացեալ սուրբ վարդապետին Մխիթարայ, որ մականունն Գոշիկ կոչի»:

¹⁵ Feydit F., *David de Sassoun, Épopée en vers, Paris, 1964, p. 38.*

¹⁶ *Choix de Fable...*, p. 463.

¹⁷ Նույն տեղում:

Թեև Ֆ. Մակլերը բանասիրական բարեխղճությամբ նշում է, թե ոմանք կասկածել են Մխիթար Գոշի հեղինակային պատկանելության խնդրում, սակայն առակների ֆրանսերեն թարգմանության «Նախաբան» հատվածում նա դրանք քննում է որպես Մխիթար Գոշի գործեր՝ ներկայացնելով նաև նրանց կապը հունական անտիկ առակագրության և XII դարի հայ գրական ընդհանուր առաջադիմական ուղղվածություն ունեցող իրականության և արժեքների հետ: Ֆ. Մակլերի թարգմանական արվեստը դիտարկելու առումով զուգադրենք մի առակի թարգմանություն.

Ֆ. ՄԱԿԼԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

75

Les poissons furent accusés par leur roi: „Pourquoi mangez-vous de plus petits que vous?” Eux s’enhardissant dirent: „C’est de toi que nous l’avons appris. Beaucoup sont venus se prosterner devant toi; tu les as avalés et tu en as fait ta pâture”.

Pour cette raison, ils devinrent encore plus hardis.

Cette fable réprimande ceux qui, en voulant accuser les autres de ce qu’ils font eux-mêmes, les exhortent encore plus au mal, plutôt qu’ils ne les arrêtent: c’est par l’action et non par la parole qu’il convient de donner les conseils.¹⁸

ՄԻԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԲՆԱԳԻՐԸ

Մեղադրեցան ձկուներ ի թագաւորէն իւրեանց, թէ ընդէ՞ր գայլս ուտէք զմանունսն: Եւ նոքա համարձակեալ ասեն. «Վասնզի ի քէն ուսաք. եկեալ բազմաց յերկրպագութիւն եւ կլանելով կերակուր քեզ արարեր. ըստ այսմ եւ ինքեանք եւս յանդգնագոյնք եղեն:

Զայնոսիկ յանդիմանէ առակս, զի որով ինքեանք գործեն, գայլս բամբասել կամելով առավել եւս ի չարիս յորդորեն, քան թէ կարճեն. վասնզի գործով, քան բանիւ ի դէպ է լինել խրատուն¹⁹:

ИЗБРАННЫЕ ПРИТЧИ МХИТАРА ГОША НА ФРАНЦУЗСКОМ ЯЗЫКЕ

ДОЛУХАНЫН А. Г.

Резюме

В 1902 году в журнале “Journal Asiatique” впервые были опубликованы избранные притчи Мхитара Гоша в переводе известного французского арменоведа Фредерика Маклера. Маклер предварил их ценным предисловием, в котором приводятся высказывания разных арменоведов о притчах М. Гоша.

Ф. Маклер характеризует М. Гоша как великого новатора, поскольку еще в XII веке, задолго до Лафонтена, персонажами его притчей являлся растительный мир во всем его многообразии.

¹⁸ Նույն տեղում, էջ 482-483:

¹⁹ Մխիթար Գոշ, Առակք, Վենետիկ, 1854, Հէ: